

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՅՅՈ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԵՎ
ՀՅՈՒՍԽԱՅԻՆ ԻՌԱՎԱԴԻԱՅԻ
ՄԻԱՅՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ**

(10-18 հունիսի 2004 թ.)

Հունիսի 10-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Անգլիան Եկեղեցու պետք Քենթրբերի Արքեպիսկոպոս Դոկտոր Ռոռուան Ուիլիամսի հրավերով մեկնեց Մեծ Բրիտանիայի և Հյուսխային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն:

Հայոց Հայրապետին ուղեկցում էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատրաստանարու Գերաշնորհ Տ. Եզնիկ Եպիսկոպոս Պետրոսյանը, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս Եպիսկոպոս Ներսիսյանը, Հոգեշնորհ Տ. Մեսրոպ արեղայ Պարսամյանը՝ որպես զավագանակիր, և Երևանի Պետրական Համալսարանի ռեկտոր Ռադիկ Մարտիրոսյանը: Հագուկ այս այցելության համար Նորին Սրբության զիսավորած պատրիարքակության հետ Անգլիա եկավ նաև Հայաստանի Հանրապետությունում Մեծ Բրիտանիայի և Իռլանդիայի Միացյալ Թագավորության դեսպան Թորդա Վրորվաթը:

Հունիսի 10-ին, ժամը 13.15-ին, Լոնդոնի Ֆիթրոու օդանավակայանում Վեհափառ Հայրապետի զիսավորած պատրիարքակությանը դիմավորելու էին նեկի Անգլիայի հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Նաթան Եպս. Հովհաննիսյանը, Միացյալ Թագավորությունում ՀՀ արքակարգ և լիազոր դեսպան Վահե Գարբիեյանը, դեր և տիկին Ջորջ և Դայանա Քյուրքյանները, բրիտանահայ համայնքային և Եկեղեցական խորհրդի արքենապետ Արա Փալամույանը, ինչպես նաև Անգլիան Եկեղեցու ներկայացուցիչներ՝ Եվլուպայի Եպիսկոպոս դր. Զեֆրի Ռոռուալդ, Քենթրբերի Արքեպիսկոպոսի Էկումենիկ կապերի քարտուղար Կանոնիկ Ջոնաթան Գոֆը և Ուորին Էլքուր:

Օդանավակայանից Վեհափառ Հայրապետին ուղեկցող պատրիարքակությունը առաջնորդվեց Լամբեթի պալատ՝ Անգլիան Եկեղեցու կենտրոն, որ նրանց դիմավորեց Քենթրբերի Արքեպիսկոպոս Դոկտոր Ռոռուան Ուիլիամսը: Իր ողջույնի խոսքում նա մասնավորաբ նշեց. «Ուրախ եմ ողջունելու Նորին Սուրբ Օծություն Գարեգին Բ-ին Լամբեթում իմ դասը և Քենթրբերի իմ թեմում: Մարդկային ջերմ հարաբերությունների երկար պատմություն զոյություն ունի Անգլիայի Եկեղեցու և Հայ Առաքելական Եկեղեցու միջև, և իմ բաղմանքն է նորոգել բարեկամությունը Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ և առավել գորացնել կապերը մեր Եկեղեցիների միջև»:

Երեկոյան ժամը 20.00-ին, ի պատիվ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, դրվեց բարիզալստրան ընթրիթ Լամբեթի պալատի Նիկիական Ակումբում, որին ներկա էին Քենթրբերի Արքեպիսկոպոս Դոկտոր Ռոռուան Ուիլիամսը, տիկին Ուիլիամսը, ակումբի ապենապետուին և այլ հյուրեր: Լնթրիթի ընթացքում Նորին Սրբությունը ողջույնի իր խոսքն ուղղեց ներկաներին:

ՎԵՆԱՓԱՌ ՇԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՆԻԿԻԱԿԱՆ ԱԿՈՒՄԲՈՒՄ

Մենք մեծապէս ուրախ ենք, որ ի Քրիստոս մեր սիրեցյալ եղբոր՝ Նորին Սրբազնության հրավերով այսօր գլուխում ենք Համբեթում և հնարավորություն ունենք հանդիպելու Ձեզ հետ: Օգտվելով այս առիթից, կուգենայինք ընդհանուր ակնարկով ներկայացնել Հայոց Եկեղեցին:

Նևազոյն ու ավանդապահ Եկեղեցիներից մեկն է Հայ Առաքելական Եկեղեցին: Ժարադարելով հայոց պատմությունը, մեր մատենագիրները միշտ խնդությամբ են պարզում այն մասին, թե ինչպես մեր Տիրոջ՝ Դիտու Քրիստոսի երկու աշակերտները՝ Սուրբ Թադէոս և Սուրբ Բարդուղիմէոս առաքյալները, եկան Հայացուն՝ քարոզելու Ավելարանը մեր փրկության ու եղան առաջին Լուսավորիչները հայոց: Հայկական թագավորության ընդարձակ տարածքում, տարբեր նահանգներում նրանց քարոզությամբ ծնունդ առան քրիստոնեական համայնքներ, ու հայություն Հայ Առաքելական Եկեղեցին: Առաջապներին հաջորդած Հայության պետքանիշները հետևող Եկեղեցին՝ կրելով հալածանքները հայոց հեթանու թագավորների և բոլոր դժվարությունները հեթանոսական ժամանակների: Ծուրջ 250-ամյա այդ ժամանակահարվածում հայոց հոդում քրիստոնեության համար նահապեակվեցին իրենք առաքյալները, նրանց հաջորդած եպիսկոպոսներ, քազմաքիլ հայ քրիստոնյաներ, որոնց մեջ նաև՝ արքային գուն անդամներ ու իշխանազուններ: Այսպիս ապրեց Հայ Եկեղեցին մինչև 4-րդ դարասկիզբ, երբ Աստծո Բարերար Կամքով քրիստոնեությունը Հայացաւում հոգակից պետրական կրոն:

Հայոց կյանքի այդ մեծազոյն իրադարձությունը իրականացավ 301 թ., երբ, ունկնդրելով Սուրբ Գրիգոր Լուսավորչի քարոզությունը, քրիստոնեություն ընդունեց Տրդար Գ թագավորը, ով մինչ այդ ինքը ևս խիստ հալածանքներ էր ծավալել քրիստոնյաների դեմ: Անմարդկային գուանչանքների ներքարկելով, նա կարգադրել էր նահապեակվեցների բանադր նեկուն նաև Սուրբ Գրիգորին: Բանադր այդ պարզ գուր էր՝ խորլ փորված, ուր ընկնողն այլև դուրս չեր զալիս: Այնուհետ բանադրված, 13 տարի Սուրբ Գրիգորը համբերեց բոլոր նեղություններին: 13 տարի նրա աղոթքը երկինք բարձրացավ՝ նահապեարդների գուրից օրինություն խնդրելով հայոց համար: Եվ Աստված անսաց իր մեծ խոսքովանողի ու կնևածանի նահապեակ վկայի հայցին: Երկնային ազդմամբ պարուհասպած թագավորին բուժելու համար դուրս բերեցին գուրից Սուրբ Գրիգորին, ում վհճակված էր լինելու հայոց երկրորդ Լուսավորիչը և Հայոց Հավատի:

Ասրված կամեցավ համազգային դարձը հայ ժողովրդի: Սուրբ Գրիգորի հրաշագործ ձեռքով ամոքվելով իր մարմնական ու հոգնոր ցավերից, Տրդար արքան դարձավ նրա գործակիցը՝ ողջ Հայացանը քրիստոնեական հավատին դարձնելու գործում: Հայացանը մկրտվեց քրիստոնյա, առաջինը աշխարհում քրիստոնեությունը հոգակից պետրական կրոն: Վաղարշապատ մայրաքառարում, այն դեղում, ուր Սուրբ Լուսավորչի հայացքի առջև երկնային լոյսերի մեջ ի-

զել էր Քրիստոս, կառուցվեց Մայր Տաճարը հայոց, որը կրուն է էօք Միաձնի՝ Էջմիածին անունը: Ժողովրդին համապատասխած կրթելու համար ամենուր բացվեցին դպրոցներ, կարգվեցին հոգևորականներ, կառուցվեցին եկեղեցիներ ու վանքեր, կազմակերպվեց Հայ Եկեղեցու վարչական կառույցը, և Սուրբ Գրիգոր Լուսավորիչը եղավ առաջին հայոց Կաթողիկոսը:

Այսօր մեր ժողովրդի համար մեծ ոխտարենի է Խոր Վիրապ անունը կրող այն վանքը, որ կառուցված է Սուրբ Լուսավորչի բանափախոյի հարևանությամբ: Վանքը նայում է ուղիղ Արարատին, որ հանգրվանեց Նոյյան փրկության տապանը, իսկ գործն իշխող ոխտակորները հավատում են, որ իշխելով բարձրանուն են դեսի Աստված:

Հայոց Մեծ Դարձով սկսվեց մի նոր ճանապարհ՝ քրիստոնյա հայաստանի ճանապարհը: Այսուհետ նոյնացան հայ ժողովուրդը և Հայ Առաքելական Եկեղեցին: Ճարկապես 5-րդ դարի սկզբին Մեսրոպ Մաշտոց վարդապետի կողմից հայ գրերի սկզբունքից հետո մեծ զարթոնք ապրեց քրիստոնեական կյանքը Հայաստանում: Սահակ Կաթողիկոսն ու Մաշտոցը իրենց աշակերտների հետ հայերներ քարոզմանեցին Ասրբածաշունքը: Տունարենից ու ասորերենից քարզմանվեցին քազմախիլ գործեր, որոնցից ոճանք այսօր միայն հայերնենով են պահպանվել:

Հայ հոգևորականների ձեռքով սկզբունքության ասրբածարանական, եկեղեցական, պարտևազիրական ու բնագիրական հարուստ գրականություն, ծնունդ առավ հայ մշակույթի Ուկեղարք: Այսպես քրիստոնեության սկզբանառորեն ճանաչունից 100 տարի անց նոր օրինություն իշխալ հայոց լյանքին: Հայ ժողովուրդը հայերենով խոսեց աշխարհի հետ իրք քրիստոնյա ազգ՝ Հայ Առաքելական Եկեղեցի: Շնորհած 1700 տարիների պարտևության մեջ ինչպիսի իրավիճակներում էլ որ զրնվեց հայ ժողովուրդը, ինչ դժվարություններ էլ կրեց, միշտ հաղթանակող եղավ նրա քրիստոնեական մշակույթը՝ ընդունակ սկզբունքագործելու և այլոց սկզբունքը ճանաչելու և ընդունելու: Հայ մշակույթը միշտ մնաց հարազար ու անքածան մասնիկը ընդհանուր քրիստոնեական մշակույթի, ինչպես որ Հայ Եկեղեցին՝ իրք արդահայություն Քրիստոսանվեր հայ հոգու, դավանարանական ու ծիսական, վարչական կառույցի առանձնահարկություններով հանդերձ միշտ եղավ ու Կհարազար անդամը Քրիստոսի Ընդհանրական Սուրբ Եկեղեցու: Ընդհանուր եկեղեցական լյանքում Հայ Եկեղեցին առաջնորդվել ու շարունակում է առաջնորդվել «Միութին ի կարևորություն առաջնորդություն և առաջնորդություն ի կարևորություն առաջնորդություն» սկզբունքով: Այսօր էլ Մենք միհապես կարևորում ենք եղբայրական սիրո հարաբերությունները քոյլ Եկեղեցիների հետ և քրիստոնեական Եկեղեցիների սերտ ու ջերմ համագործակցությունը՝ հանուն մեկ սեկ առաքելության, որին կոչված ենք մեր Տեր ու Փրկիչ Հայութ Քրիստոսի կողմից:

Մեր ժողովրդին հավատով լուսավորելու, հայագի մեջ հաստապուն պահելու և դեսի Ասրբած առաջնորդելու իր առաքելությանը հավատարիմ մնալով, Հայ Եկեղեցին պարտևության ընթացքում, երբ դադարել է գոյությունը հայոց սկզբանության, հաճախ սրբագիր է եղել կրելու նաև հայ ժողովրդի գոյապահպանության պարասիստարկությունը, պարտասիստաներ գրնելու նաև նրա քաղաքական

խնդիրներին: Հայոց պատմությանը թեկուզ հպանացիկ ծանոթները զիրեն, թե ինչպիսի փորձություններով է լիցուն այն, որքան հարձակումներ ու ավերներ է տեսակ հայաստանը, որքան մահ ու կորորած է վերապրել հայ ժողովուրդը ու որքան ցանք ներդրել՝ պատագրելու համար հայրենիքը, վերսպին կառուցելու համար իր երկիրը: Իր կյանքի հոյսն ու զորությունը մեր ժողովուրդը զրել է հարության հավաքի մեջ և չի վարանել կովկաս ու մեռնել հանուն քրիստոնեության: Հայոց հողի վրա միշտ հավթական մնաց Քրիստոսի Խոճը, հայաստանը և Հայ Եկեղեցին մնացին քրիստոնեության բերդամբոց Արևելքուն:

Նվաճողների սրից ու բռնություններից հալածական մեր ժողովուրդի զավակները պարբեր ժամանակներում սպիտակած են եղել հետանալ հայրենիքից ու հաստապվել այլ երկրներում: Ասպծոց իրեն վարպահված ժողովրդի հետ աշխարհացրիվ է եղել նաև Հայ Առաքելական Եկեղեցին՝ հովվելով իր հովը, որպեսզի ապրելով կրոնների ու մշակույթների հետ կողմ-կողմի, պահպանեն քրիստոնական մեր սուրբ հավաքով, որ ժամանակություն ունենք մեր հայրենից, ազգային արժեքներն ու ավանդները և մնան միաբան՝ իրքն ժողովուրդ Քրիստոսի՝ Հայ Առաքելական Եկեղեցի: Արդերկորում մեր Եկեղեցու շարք թեմեր ունեն հարյուրամյակների պատմություն, սրեղծել են հայուսիր ու ծաղկուն մշակոյք՝ իրենց կարևոր նպաստը բերելով այլ երկրների կյանքին ու առաջընթացին:

Տարկապես սպասարացան հայկական գաղյօջախները, երբ Օսմանյան Թուրքիայի դիրքապեկության ներք գրենվող Արևելյան հայաստանում և Թուրքիայի հայութափ այլ բնակչավայրերում հայկական կողորուածներ գեղասպանություն 19-րդ դարավերջին և իրականացվեց ցեղասպանություն 20-րդ դարասկզբին, երբ Թուրքիան Առաջին աշխարհամարտի իրավիճակը հարմար նկատեց, որպեսզի Արևմտյան հայաստանը, որը պատմական հայաստանի մեծ մասն է, դադարկվի նրա բնիկ ժողովրդից: Ամենավայրագ մեթոդներով կողորովեց անզեն ժողովուրդը, զաղթի ճանապարհներին ստվահար եղան կանայք, երեխաներ ու ծերեր, բարանվեցին ու քանդվեցին հարյուրավոր եկեղեցներ ու սրբաւույններ, այրվեցին հինավոր ճեղուզիր ու դրազիր մակրյաններ: Մեծ եկեղեցից փրկված քազմաշիվ հայ ընտանիքներ հաստիպվեցին նաև Մեծ Բրիտանիայում: Հայրապետական Մեր այցի օրեւիրին Մեծ Բրիտանիա Մենք ականաբնի եղանք մեր զավակների հավատավոր կյանքին, հավատարմությանը ազգային արժեքներին և լսեցինք այն ազնիվ մասնակցության մասին, որ բնորում են Մեծ Բրիտանիայի հաստակական կյանքի դարձու բնագավառներուն:

Նախորդ՝ 20-րդ դարասկզբը մեծ դժվարություններ բերեց նաև Արևելյան հայաստանին, որ նոյնպես գնասավ պատերազմի ավելիները: Այնուհետև հաստապվեցին Խորհրդային կարգերը, և այսինք էլ փակվեցին եկեղեցները, շատերը քանդվեցին կամ վերածվեցին պահեաւարանների, սպանվեցին ու աքտորվեցին հարյուրավոր հոգևորականներ: 70 տարիներ ժողովուրդը հետո մնաց իր հավաքից, Ասպծո հետ կենաչափ հատորդակցությունից: Այօր, երբ մեր ժողովուրդը վերականգնել է ազգային պետականությունը պատմական իր հայրենիքի Արևելյան մասում, Հայ Եկեղեցին ունի զործունեության պատմական ազգարություն: Արդեն մեն

լրասնամիակ ջանքեր են ներդրվում հաղթահարելու համար աթեկալրական ժամանակների ավերները, նորոգելու հավատը մարդկանց հոգիներուն, լուսավորելու թիվագունդական ճանապարհությամբ: Իրականացվում են լուսորդեր՝ թիվագունդական գրականության հրադարակություն, հեռուստագլուխին և ուղիղ հաղորդումներ, անցնող ոստումնական լրացվածից հանրակրթական դպրոցներուն ուսուցանվում է նաև Նայ Եկեղեցու պատմություն: Միջուրի և հայրենաբնակ մեր զավակների աջակցությամբ նորոգվել են շատ եկեղեցիներ, կառուցվել են նորերը: Եկեղեցաշինությունը այսօր էլ շարունակում է մենակ առաջնարձեւոյթ նպարակներից: Առանձնակի կարևորուն ենք հոգևորական նոր սերնդի պարուսության խնդիրը, և այսօր ուրախ ենք ասելու, որ այս առամով նոյնական հաջողություններ կան: Մասնավանդ ուրախ ենք այսուհետ անդրադառնակու, որ մեր Եկեղեցուն ներկա դժվարությունների մեջ աջակից են թիվագունդական բոյր Եկեղեցիներ՝ հայրապետ հոգևորականների երիտասարդ սերնդի պարուսութման ու սոցիալրական զարգացման ծրագրերի իրանական ողբարյունություն:

Այսօր Աթոռը ազար է նաև Միջուրի իր թեմերի հետ հաղորդակցությունն ու քննականն հարաբերությունները պահպանելու հարցում: Միջուրի մեր զավակները ազար են այցելելու հայաւրան ու Սուրբ Հջմիածին, մեր ուխտավար սրբագրելիները, աջակցելու հայությանը երկրի ներկա դժվարությունների մեջ:

Գործունեության ընձեռնված ազարությունը և հոգևոր լրանքի հանդեպ ժողովրդի մեջ աճող հետաքրքրությունը միաժամանակ ավելի դիւսանելի է դարձնում այն բոլոր պակասառջուններն ու խնդիրները, որոնք կուպակվել են լուսաւում ամենակարևոր կամ ամենաառաջնային առողջություններն ու հայություններն ու հայությունների մեջ: Մեր հայաւրուն ենք, և մեր ժողովուրդը՝ նոյնական, որ ներդրվող ջանքերը իրենց արդյունքներն են լուսաւում ամենի առջև առաջնային առողջությունները և Նայ Եկեղեցին լիազոնէ շարունակելու է իր առաքելությունը՝ ի սեր ու ի փառու նոր և Որդիլու և Նոգույն Սրբու: Ամեն:

Հաջորդ օրը, հունիսի 11-ին, առավորյան ժամերգությունից հետո, Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցավ Քենթրերի Արքապիսկոպոս Դոկտոր Ռոռան Ուիլիամսի հետ: Հանդիպմանը ներկա էին Անգլիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ S. Նաթան Եպո. Հովհաննիսյանը, Միջեւելեցական հարաբերությունների բամի պարասիանապու Գերաշնորհ S. Եզնիկ Եպիսկոպոս Պետրոսյանը, ԵՊՀ ռեկտոր Ռադիկ Մարտիրոսյանը, Զորք Ջյուրջյանը, Հովելինորի Տ. Մկրտիչ արդ. Պոռշյանը և Հովելինորի Տ. Գևորգ արդ. Սարոյանը, իսկ Անգլիկան Եկեղեցու կողմից՝ Եվրոպայի Եպիսկոպոս Դր. Զեֆրի Ռոռանը, Անգլիկան Եկեղեցիների Միության Էկումենիկ հարաբերությունների և ուսումնասիրությունների գնորնեն Կանոնիկ Գրեգորի Կամերոնը, Կանոնիկ Զոնաթան Գոփը և Նայր Էնդրյու Նորմանը:

Հանդիպման նպարակն էր ոչ պաշտոնական ձևով քննարկել ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցեր՝ կապված ասրբածարանական կրթության, դպրոցներում, հիմնանոցներում, բանկերում և զինված ուժերում հոգևոր սպասավորության, Էկումենիկ հարցերի և Անգլիկան-Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների միջև երկխոսության հետ:

Հանդիպումից հետո գլուխ ունեցավ սեմինար՝ նվիրված զինված ուժերում հոգևոր սպասավորությանը: Վեհափառ Հայրապետը և իրեն ուղեկցող շքախումբը հանդիպեցին Գլուխ Վասպելան և Արքայական Օղային ուժերի ավագ սարկավագ Վեն Ռոն Շեսկեթին, Նորին Մեծության ցամաքային ուժերի փոխապելան Հայր Ջոն Ուիլփոնին, Հայր Ստիվեն Ուեյրին և Հայր Ստիվեն Ռոբինսոնի: Նրանք բոլորն էլ ծառայության մեծ փորձառություն ունեն զինված ուժերում և խոսեցին կապելանների և երամանաբարական կառույցների միջև հարաբերությունների, երիտասարդների և նորակոչչեկների ծառայության, կապելանների վերապարբասրման և այլ կարևոր հարցերի մասին:

Նոյն օրը, ժամը 12.20-ին, Նորին Սրբությունը Քուկինզիեմյան պալատում հանդիպում ունեցավ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Խոլանդիայի Մագավորության թագուհի Նորին Մեծություն Էլիզաբեթ Երկրորդի հետ:

Հանդիպման ընթացքում խոսվեց երկու պետքանիւնների, ժողովուրդների և Եկեղեցիների շերմ հարաբերությունների, առևտ բարեկամության գորացման և ամրապնդման կարևորության մասին: Իր խոսքում Ամենայն Հայոց Հայրապետը մասնակորարար անդրադապ 1915 թ. Հայոց ցեղասպանությանը, նրա ճանաչմանն ու դադապարբաժնան անհրաժեշտությանը:

Հանդիպմանը ներկա էին նաև Անգլիկան Եկեղեցու պետ Քենթրեթի Արքեպիսկոպոս Ոռուան Ուիլիամը և Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Խոլանդիայի Մագավորությունում ՀՀ արքակարգ և լիազոր դեսպան Վահե Գարբիելյանը:

Եկամտիչորենին, ի պարփակ Նորին Սրբության, Լամբեթի պալատում կազմակերպվեց ընդունելություն, որին ներկա էին մի շարք բարձրասպիհան հոգևորականներ և պաշտոնյաներ, որոնց թվում էր նաև Գլուխեթի դուքսը, որն իր մասնակցությունն էր քերել 1700-ամյակի դրույակարություններին որպես Էլիզաբեթ Երկրորդ թագուհու ներկայացուցիչ:

Ընդունելության ընթացքում սկսուագրվեց Ս. Գրիգոր Լուսավորչի անվան կրթաթոշակ սպեշենու մասին մի փասբաթուղթ: Սա մի կրթաթոշակ է, որը հովանավորում են Մեծ Բրիտանիայում ապրող հայ բարերարները և դեկավարում է Ս. Անդրեասի Էկումենիկ ֆոնդը: Ուսանողը, որին պետք է կրթաթոշակ հարկացվի, նշանակվում է Վեհափառ Հայրապետի գնորինությամբ և Քենթրեթի Արքեպիսկոպոսի համաձայնությամբ:

Քենթրեթի Արքեպիսկոպոս Դոկտոր Ոռուան Ուիլիամը մի քանի խոսքով ներկայացեց այդ փասբաթուղթը, որը սկսուագրեցին Ֆոնդի նախագահ, Ուեսթուելլի Լորդ Հարդը և պարուն Ջորջ Քյուրքյանը՝ բարերարների անունից:

Նոյն օրը, ժամը 17.00-ին, Վեհափառ Հայրապետի գլխավորած պարվիրակության անդամները և իրեն ուղեկցող շքախումբը Ուեսթմինսթի Արքայությունում մասնակցեցին Երեկոյան Ժամերգության, որից հետո պասկ գերեզեցին 20-րդ դարի նահապակների հուշադրելում, ապա եղան Ս. Էղվարդի մագուսում, որպես Վեհափառ Հայրապետը և Քենթրեթի Արքեպիսկոպոսը աղոթք բարձրացրեցին առ Աստված, այնուեւր այցելեցին Արքայության հիմնական դեսարժան Վայրերը:

Երեկոյան ժամը 19.30-ին Գորինգ հյուրանոցում Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի հյուրասիրությամբ վելի ունեցավ ընթրիք, որին ներկա էին Քենթրեթի Արքեպիսկոպոս Դոկտոր Ոռուան Ուիլիամը, Եվրոպայի Եպիսկոպոս Դք. Ջեֆրի Ոռուելլը, Եվրոպայի ընթերական Եպիսկոպոս Դեյվիդ Համբողը, Ուեսթմինսթի Արքայության վանահայր



«ՀԱՅՈՒԹՎՈՒ»-ԻՎ ՄՈՒՏՏԵ ԵՎ ՀԱՅՈՒԹՎԵԱԿԱՆԻ ՕՐՆՈՒԹՅՈՒՆ
ԼՈՂՈՒՆ Ա. ԱՐԳԻՆ ՀԱՅՈՒԹՎՈՒՆ



Դոկտոր Ուսափի Քարրը, Քենարքերի Արքեպիսկոպոսի Էկումենիկ կապերի քարքուղար Կանոնիկ Զոնաթան Գոֆը, Անգլիկան Եկեղեցիների Միության Էկումենիկ հարաբերությունների և ուսումնասիրությունների գործեն Կանոնիկ Գրեգորի Կամերոնը, Ամենայն Հայոց Կաթողիկոսությունում Քենարքերի Արքեպիսկոպոսի նախկին ներկայացուցիչ Ֆիլիպ Սթոր Վենդերը, Ս. Անդրեաս Էկումենիկ Ֆոնդի ծրագրերի գործեն պարոն Քրիստոֆեր Օսպենը և այլոր:

Նաջորդ օրը, հունիսի 12-ին, առավույց ժամը 9.30-ին, գեղի ունեցավ հանդիպում Մեծ Քրիստոնիայի Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների խորհրդի ներկայացուցիչների հետ, որին մասնակցում էին Խորհրդի նախագահ Գերշ. Տ. Նարան և պատուական պատուական առաջնորդ Տաճ. Անդրեաս Շահումյանը (Ապահովագործության պատուական պատուական Եկեղեցի), Աքքա Սերաֆիմ Մելքոնովը, Խորհրդի ապեսնապետ Տաճ. Անդրեաս Շահումյանը, Տաճ. Բիշոյ Մակարը (Պատուական պատուական Եկեղեցի), Տաճ. Էլիոզ Կունզամայիլը, Խորհրդի քարքուղար Ազիզ Նուրը (Աստիք Ուղղափառ Եկեղեցի) և Տաճ. Յոհաննեսը (Էրիթրեայի Եկեղեցի):

Նոյն օրը, ժամը 11.00-ին, Տաճ. Հայրապետը պատվիրակության անդամների հետ այցելեց Տույն Ուղղափառ Եկեղեցու Թիափիրիայի և Մեծ Քրիստոնիայի արքեպիսկոպոս Գրեգորիոսին, իսկ հետմիջօրենին՝ Ս. Մարիամի արքայություն, որը Անգլիկան Բնենոյիկոյան կանանց միաբանություն է և հիմնադրվել է մոդավորապես 1090 թ.: Առաջին միաբանությունը գործել է մինչև 1538 թ., երբ Մեծ Քրիստոնիայում բռնը վանքերը փակվեցին Շենքի Ը թագավորի հրամանով: Վանքի կալվածքները աշխարհականների ձեռքում մնաց մինչև 1892 թ., երբ այն գնվեց վանական կյանքը վերականգնելու նպարակով: Ներկայիս Եկեղեցին օծվել է 1966 թ.:

Վեհափառ Տաճ. Հայրապետը և Քենարքերի Արքեպիսկոպոսը ուղևորվեցին Արքայության նկեղեցի, որ նրանց ողջունեց մայրապետը, որից հետո կապարվեց համարելու աղոթք: Այնուհետև Վեհափառ Տաճ. Հայրապետին հրավիրեցին Տերունական աղոթքը հայերենով ասելու: Կարծ արարողությունն ավարտվեց Նորին Սրբության և Քենարքերի Արքեպիսկոպոսի օրինության խոսքերով: Վյուհերս նրանք ուղևորվեցին դիմելու Արքայության միջնադարյան կառույցները և այգին, որից հետո Տաճ. Հայրապետը հանդիպում ունեցավ միանձնութիւնների հետ, որոնք Նորին Սրբությանը խնդրեցին մի քանի խոսքով ներկայացնել Տաճ. Եկեղեցու վանական կյանքը:

Ժամը 16.45-ին Նորին Սրբությունը հայրապետական շքախմբի անդամների հետ ժամանեց Քենարքերի հին պալատ, որ երեկոյան ժամը 22.00-ին գեղի ունեցավ վառված մոմերով թափոր ղեափի Մայր Տաճար:

Կիրակի օրը, հունիսի 13-ին, Քենարքերի Արքեպիսկոպոսի հանդիսապետությամբ գեղի ունեցավ Ս. Պատարագ Քենարքերի Մայր Տաճարում: Հընթաց Ս. Պատարագի ներկաներին իր խոսքը ուղղեց Վեհափառ Տաճ. Հայրապետը.



**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՅՆ ՀԱՅՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՔԵՆԹ-ՐԵՔԵՐԻՒ
ՄՎՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ**
(13 հունիսի 2004 թ.)

«Այդպիս և մենք, թվով շատ, մի մարմին ենք Քրիստոսով.
բայց յուրաքանչյուրս միմյանց անդամ ենք»:
(Նում. ԺԲ 5)

Գոհություն և փառք Տիրոջը, որ մեկ մարմնի անդամները լինելու հոգենորոգ զգացումը այսօր հաւախմբել է մեզ Քենթրոնի այս հնագոյն Մայր Տաճարուն։ Ուրախ է Մեր հոգին, որ Ամենակարող Աստված պարզեց Մեզ առիթը Քենթրոնի Արքապատճենուն, Մեր հոգենոր եղբայր Ռոռան Ռիմիամի ազնիվ հրավերով այսօր գտնվելու այսպես և ձեզ հետ միասնաբար աղոթք վերառաքելու երկինք, հայցեղով մեր Տեր ու Փրկիչ Հայոց Քրիստոսից, որ խաղաղություն պարզեց աշխարհին համայն զորացնի եղբայրությունը մարդկանց մեջ և անսասան ու պայծառ պահպանի Իր Սուրբ Եկեղեցին։

Մենք՝ որպես Ծայրազոյն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Տայոց, Տայաս- տանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգնոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջոյն և օրինություն ենք բնույթ Անգիլիան Եկեղեցու հավատավոր անդամներին ու հոգնոր դասին, Մեծ Բրիտանիայի պետական այրերին, այսպես ներկա բոլոր քոյր Եկեղեցների ու կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներին և հայ համայնքի անդամներին։ Ձոդ Աստված օրինի մեր եղբայրությունը և ունկնդիր լինի մեր աղոթքներին։

Միրելի եղբայրներ ու քոյրեր, Տոգեգալստյան այս շնորհանորոգ օրերին մենք բոլոր առավել զգում ենք հոգնոր միությունը՝ իրն Քրիստոսի մեկ Եկեղեցի։ Սուրբ Տօնու Էջքով առաքյալների վրա և նրանց քարոզությամբ ծնունդ առավ Լուսիանրական Եկեղեցին, որ բարածվի ու պահպանվի փրկության հոյսը աշխարհում, որ մարդկության կյանքը շարունակ եռորդվի մեր հանդիպ Աստծո Սիրո միխթարությամբ ու մարդկանց մեջ հաճությամբ։ Այս նոյն առաքելությունն է միավորում մեզ՝ համաձայն Պողոս առաքյալի խոսքերի։ «Այդպիս և մենք, թվով շատ, մի մարմին ենք Քրիստոսով, բայց յուրաքանչյուրս միմյանց անդամ ենք»։ Այս զգացումը քաջակերում ու զորացնում է յուրաքանչյուրին, երբ կողք-կողքի ենք՝ միմյանց աջակից ու զործակից։

Մեզ համար խորհրդանշական է, որ նախախնամական տնօրինությամբ մենք աղոթքի ենք համախմբել այսօր, երբ Տայ Եկեղեցին պոնախմբում է Սուրբ Էջմիածնի տոնը։ Մեր ժողովուրդը ոգեկոչում է հիշարակները այն օրերի, երբ Քրիստոսի իշման տեղում մեր նախնիները հիմնադրեցին Տաճար Աստծո, որպեսից Ավելարանի լուսը համարած սփռվեց Տայաստանի վրա, և համաշխարհային պատմության մեջ առաջինը հայոց թագավորությունը 301 թ. քրիստո-

ներությունը հոգակց պետական կրու: Քրիստոնեության այս հաղթանակի խոր հրդուվ Սուրբ Էջմիածնի տունը համաքրիական հնչողություն ունի ու արժեք: Այս ընկալունի ամենապայծառ արդահայրությունը եղավ 35 քոյր Եկեղեցիների ու կրոնական կազմակերպությունների պետքերի ու ղեկավարների մասնակցությունը Հայաստանու քրիստոնեության պետական ճանաչման 1700-ամյակի տունակարգարություններին: Սուրբ Էջմիածնում հոքեյանական հանդիսություններին մասնակցեց նաև Քենթրոնի նախորդ Արքապետապոս և Մեր հոգնոր նդրայր Գերաշնորհ Զոր Քերորին:

Մեր Եկեղեցու առաքելության ճանապարհին մշտապես կարևոր է ենք սերդ հարաբերությունները քոյր Եկեղեցիների հետ՝ որպես ավանդական դիրքորոշում, որն այնքան հարազար է Օգոստինու Երանելու բնութագրունակը. «Միութին ի կարևոր, ազատութիւն յերկրայական, և այդ յամենայնի»: Մենք հավատում ենք սիրո ու եղայրության հաղթանակող գորությանը: Դիրավի, քրիստոնեական Եկեղեցիների ընդանիքում մեր սերդացող հարաբերություններով ու գործակցությամբ ամենի դյուրությամբ պիտի վճիռներ գրնենք մեզ հոգող խնդիրներին, ինչպես նաև՝ պատասխաններ արդի ժամանակների հրանայականներին ու մրահոգություններին, որպեսզի աշխարհի զերծ լինի բռնություններից, կարիքից ու աղքակությունից, որպեսզի Ավելարանի լույսը Քրիստոսի Սուրբ Եկեղեցիով անպալեր պարագաներ աշխարհում, և ասպականաւու հոգու բարի արգասիքները առաջնորդեն մարդկության կրանքը:

Ավանդաբար բարեկամական են Անգլիկան և Հայ Եկեղեցիների հարաբերությունները, որ գորացել են երջանկահիշարակ Մեր նախորդների և Անգլիկան Արքապետապունիքի փոխայցելություններով: Այս շրջագծում է նաև երիտասարդ հայ հոգնորականների ուսման շարունակումը Մեծ Բրիտանիայի ասպականական կրթական հաստակություններում, ինչպես և Մեր այս այցը: Հանդիսավոր ու աղքաղուն այս պահին սիրով հրավիրում ենք Ձեզ՝ հոգնոր եղայր Ռուսական Օփիջիան, Ձեր ուղեկիցների հետ այցելելու Հայաստան, նայելու բիրլիկան Արարատին, դեռներու հոգնոր կյանքի վերագարթությը ազգային պետականությունը վերագրած մեր Հայրենիքում: Հայ Եկեղեցին ընդայնվող գործունեությամբ ջանում է վերականգնել մեր ժողովրդի հավատի կյանքը, որը խաթարվեց 20-րդ դարակզրին Արևելյան Հայաստանում խորհրդային իշխանության բերած հոգնոր սովոր, իսկ Արևելյան Հայաստանում Հայոց գեղասպանության արդյունքում:

Հայրապետական գնահատանքի ու շնորհակարության Մեր խոսքն ենք ուղղում Մեծ Բրիտանիայի իշխանություններին ու ասպականակար ժողովրդին, որ քրիստոնեական սիրով ընդունեցին Հայոց գեղասպանությունից փրկված հայորդներին և այսօր նոյն ազնիվ վերաբերմունքն ունեն նրանց ժառանգների ու այսպես ասրող բոլոր հայերի նկատմամբ, ովքեր արժանավոր քաղաքացիներն են Մեծ Բրիտանիայի և Ավելունով ու հավաքարությամբ իրենց ծառայությունն են բերում այս օրենքայ երկրի կյանքին ու առաջնորդացին: Մենք հավատում ենք, որ Հայոց գեղասպանությունը պիտի ճանաչվի ու դարտապարտվի բոլոր պետականություններու կողմէ:

յունների կողմից, ևսև՝ Մեծ Բրիտանիայի, քանզի ոճիրի դատապարտումն է այն ճաւապարհը, որով պիտի կանխվեն դրանց հետագա կրկնությունները, բռնորդյուններն ու ահարենջությունները: Մեր ժողովուրդը միշտ երախտագիտությամբ է հիշելու ևսև այն աջակցությունը, որ Մեծ Բրիտանիան ցուցաբերեց 1988 թ. աղեղափառ երկրաշրջի ժամանակը, ճայապրանի ամենածանրը շրջափակման պայմաններում: Հայցում ենք առ Ասպաված, որ չեն ու բարօր պահպանի Մեծ Բրիտանիան, աևլրով ու հասպարուն՝ Անգլիան Եկեղեցին; ու երջանիկ՝ նրա բարեպաշտ ժողովուրդին:

Տեր, աղաջում ենք Քեզ, իանապազ խնամքիդ ու օրինությանդ ներքո փորձություններից ու վրանգներից պահպանիր Ըստ Սուրբ Եկեղեցին, զորացրու բորբոք մեր պարտքի մեջ՝ լինելու միմյանց հարազար անդամներ, լինելու մի մարմին՝ Ըստ Խոսքով կենդանի ու կենդանացնող:

Թող Ասլծոն սերը, շնորհն ու խաղաղությունը թագավորեն աշխարհում այսօր և միշտ ամեն:

Ճաշից հետո գեղի ունեցավ այցելություն Քենթրբերիի Մայր Տաճար, իսկ երեկոյան ժամերգությունից հետո Վեհափառ Հայրապետը և իրեն ուղեկցող պարվիրակությունը ներկա գրնվեցին Քենթրբերիի Ս. Մարիամի եկեղեցում երիտասարդների կազմակերպած արարողությանը:

Եթեկոյան ժամը 19.30-ին Քենթրբերիի վանահայր Ռոբերտ Ուիլխոր ընթրիք դպից ի պապիկ Հայոց Հայրապետի: Ընթրիքի ընթացքում Նորին Սրբությունը խոսք ուղղեց ներկաներին՝ ասելով.

Միրելի բարեկամներ, Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորություն Մեր այցի պաշտոնական մասը մուղեցավ իր ավարտին: Այսօր, երբ մենք ևս մեկ անգամ հավաքվել ենք միասին հաց կիսելու ու միմյանց բարեկամությունը վայեկելու քրիստոնեական սիրո մթնոլորտում, Մեր սիրով ին է ուրախությամբ ու միմյառությամբ:

Այս չորս օրերը Մենք անցկացրեցինք Մեծ Բրիտանիայի օրինակ հոդամ՝ որպես Գլուխանորի Ալբրեխսկուպու Ռուսան Ուիլիամսի հյուրը: Մենք փառք և զոհություն ենք մատուցում առ Անհենական Ասպաված, որ պարզեց Մեզ այս հիմնայի հիանավորությունը՝ Մեր այցելության ընթացքում ծանոթանալու ձեր հոգնորականության և հավաքավոր հոգի հետ:

Մենք նոյնչափ ուրախ ենք, որ մեր այս համարեղ վերջին ընթրիքի վայրը Քենթրբերիին է՝ Անգլիայի Եկեղեցու և Անգլիան Եկեղեցիների Միության պատմական Մայր Աթոռու: Դրավերի և հյուրընկալության համար շնորհակալություն ենք հայրենում Քենթրբերիի վանահայր Ռոբերտ Ուիլիամսին և բոլոր այն անձանց, ովքրի մաս են ունեցել Մեր այցը Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իուլանդիայի Միացյալ Թագավորությունի կազմակերպկան գործում:

Մենք գենանք այն հաջողությունները, որ ունի Անգլիան Եկեղեցին, և մարդարակավերները, որոնց դիմացրակում է: Տեսանք ևս շատ ընդհանուր խնդիր-



ՔԵՆԹՐԻԳԵՐԻ ԱՐՁԵՄԻԿՈՊՈՍՄԱՆԻՒ





ԾԱՂԿԵՊԱՍՎԿԻ ՁԵՏԵՐՈՒՄ ՈՒԵՆԹԱԻՆՍԹՐՈՒ ԱԲԲԱՅԻԹՅԱՆ
20-ՐԴ ԴԱՐԻ ՆԱՐԱՆԿԱՑ ՑՈՒՇԱՏԵՐՈՒՄ

ներ, որ առկա են մեր Եկեղեցիների առաքելության ճանապարհին: Մեր այս այցելությունը և զրոյցները Անգլիան Եկեղեցու բարեցան հոգնոր առաջնորդի հետ՝ զրացնելով մեր երկու ռոյր Եկեղեցիների միջև արդեն խև գոյություն ունեցող ավանդական, պատմական հարաբերությունները, պիտի առաջնորդի ձեռքբերումների Եկումենիկ ոլորտում:

Մենք հավաքում ենք, որ քրիստոնեական սիրո, փոխըմբռնչան ու համազոր-ծակության ճանապարհով միայն Քրիստոսի Եկեղեցին կարող է իր իրական ներուժի ծառայեցնել՝ առաջնորդելու մեր հավատացաներին դևստի Աստված: Մեր երկու Եկեղեցիները՝ Անգլիան Եկեղեցին և Հայ Եկեղեցին, մի շարք ոլորտներում նեղակի հարաբերություններ ունեն, որոնք կարող են օրինակ հանդիսանալ մեր ռոյր Եկեղեցիների համար: Ճշմարիտ է, որ մենք ոչ բոլոր հարցերում ենք համակարգիք՝ ասպամածարանական, մշակութային կամ հասարակական կյանքի, այնուամենայնիվ, մենք պետք է միշտ իիշներ, որ այն, ինչ միավորում է մեզ, ավելին է, քան այն, ինչ բաժանում է մեզ, և միության ողին կարեռն է միմյանց հետ մեր հարաբերություններում: Միությունը, որը բոլոր Եկեղեցիների բաղնափի երազանքը է, կարող ենք ունենալ, եթե մենք միմյանց մորթենանք ոչ միայն որպես ընկերներ, այլև որպես եղբայրներ, և մեզ համար միշտ առաջնորդող լինի Պողոս Առաջայի խոսքը. «Բայց արդ, մնում են հավատ, հոյս, սեր. սրանք՝ երկը, և սրանցից մեծագոյնը սերն է» (Ա Կորնք. Ժ 4 13):

Միրելի եղբայր ի Քրիստո, Ձերդ Սրբազնություն և սիրելի բարեկաններ, Մենք այսօր մենաւում ենք այն լավագությամբ, որ մեր հարաբերությունները կշարունակեն զարգանալ Մեծ Քրիստոնություն, Հայապանում և համայն աշխարհում, և քրիստոնյա մեր ժողովուրդները կշարունակեն զորանալ հավատով Աստծո Ամենախնամ Ազի հովանու ներքո:

Թող Աստված օրինի Մեծ Քրիստոնիայի և Ծովախայի Իուլանդիայի Միացյալ Թագավորությունը, Հայաստանի Տանրականությունը, Անգլիայի և Հայ Առաքելական Եկեղեցիները և բոլոր հոգնոր սպասավորներին ու հավատացալ հոգը Քրիստոսի: Մեր մաղթանքն է, որ Աստծո շնորհով կրկին սեղանի շուրջ հավաքնենք հաջորդ անգամ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:

Տոնիսի 14-ին, Անգլիան Եկեղեցի պաշտոնական այցի ավարտին, Վեհափառ Հայրապետը և իրեն ուղևացը պարվիրակության անդամները այցելեցին Քենթրբերի Արքայական դպրոց, որ նրանց ողջունեց դպրոցի գնործն Կանոնիկ Կեյք Ուիլկինսոնը, որից հետո շրջնցին դպրոցի դպրոցում, եղան Ս. Օգոստինոս Եկեղեցում, զրադարանում, Աբբայության պարմական շինություններում:

Քենթրբերի Արքայական դպրոցում Հայ Եկեղեցու պարվիրակության պարվին կազմակերպված ճաշից հետո Վեհափառ Հայրապետը, շրախմբի անդամների հետ, վերադաս Լոնդոն:

Տոնիսի 14-18-ը Ամենայն Հայոց Հայրապետն իր օրինաբեր այցելությունը գվեց Անգլիայի հավաքավոր հայոց հորին:

Նորին Սրբությունը և իրեն ուղևացող շքախումքը այցելեցին առաջնորդանիստ Ս. Սարգսի եկեղեցի, որ «Հրաշափառ»-ի երգեցողությամբ «Վեհափառ Հայրապետը մուտք գործեց վաճար, որ կանոնական աղոթքից հետո բարիգալսկրյան խոսք ասաց Անգլիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Նարան եպս. Ռովհաննիսյանը: Սրբազն Հայրն իր խոսքում կարևորեց Ամենայն Հայոց Հայրապետի հովվագերական այցը Անգլիա՝ համայնքային կյանքի էլ ավելի աշխատացման և Մայր Աթոռի եկեղեց կապը ամրապնդելու առողջությունը: Հանուն Հին Արևելյան Ուղղափառ քոյլ Եկեղեցիների բարիգալսկրյան խոսք ասաց նաև Ղպդի Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչ Գերշ. Տ. Անգելոս Եպիսկոպոսը: Այսուհետև հավաքված ժողովրդին Հայրապետական իր օրինությունը փոխանցեց Վեհափառ Հայրապետը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՅՈՒԹԿՈՄԻ ԽՈՍՔԸ ԼՈՆԴՈՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(14 հունիսի 2004 թ.)

Միրելի ժողովուրդ


Ասրծոն ողորմությամբ ահավասիկ վերստին ձեզ հետ ենք: Ուրախ է Մեր հոգին ողջունելու և Հայրական Մեր օրինությունը քերելու սիրելի Սրբազն Տոռը, արժանապատիլ քահանա Հայրերին, եկեղեցական վարչականներին, ձեզ բոլորիդ, որ հավաքվել եք այս Սուրբ Տաճարում: Օրս բարի է մեր հանդիպման շնորհով, միանալիք մեր աղոթքով, երբ բոլորի հոգին բացված է դեպի երկինք:

Մենք փառք ենք տալիս Աստծոն, որ այս հնագոյն ու ավանդաշատ, շեն ու բարգավաճ երկրում, կյանքի մեծ ասպարեզի մեջ դուք Հայ Եկեղեցու շուրջ ապրում եք հավաքական կյանքով, ցանքեր եք գործադրում, որ Թեմզայի ափերին հայոց շուրջերին կենդանի մնա մեր մայրենին, իսկ հոգուն ամուր մնան հայրենական սրբություններն ու ավանդները: Հայապատում ապրողներին համար թիշ դժվար է պարկերացնելն ու զգալը, որ կարևոք է լինել հարազարդ զավակը հայ ժողովրդի և միաժամանակ հարազարդ զավակը Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսականի և բոլոր այն երկրների, որ ապրում են հայեր: Սակայն սա իրողություն է, և մենք հապարհ ենք այս իրողությամբ, մենք հապարհ ենք մեր բազմաթիվ զայդացածների հարուստ պարմությամբ ու մշակույթով, այն մասնակցությամբ, որ մեր ժողովրդի զավակները քերել ու քերում են իրենց հյուրընկալած երկրների հասարակական կյանքին: Մենք հապարհ ենք ձեզանոյ, և Մեր բարձր գնահատություն ենք բերում մեր բազմաթիվ զայդացածների հարուստ պարմությամբ ու մշակույթով, այն մասնակցությամբ, որ մեր ժողովրդի զավակները լինելու ու Սուրբ Հջմիածինը ձեզ սիրու, այնպէս և Անգլիայի արժանավոր զավակները լինելու համար: Ձոդ մեր առաջին աղոթքը լինի, որ Աստված Իր խնամքի և օրինության ներք պահպան Անգլիան և բյուր շնորհ պարզելի նրա ժողովրդին:

Օրինություն ենք քերել այս հնագոյն ու ավանդաշատ հողին և ձեզ ամենքին Սուրբ Հջմիածինից ու Հայաստանի սրբավայրերից: Մեր բոլորի Հայրենիքից ու հավատքի Միաձնաւէջ կենդրունից սեր ու կարուր ենք քերել ձեզ, որը, հավաքում ենք, պարասախան սիրո ու կարուրի զգացունով արձագանքում է այս պահին ձեզ



ՎԵՐԱՓՈԽԻ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՏԵՂ ԵՎ ՏԻԿԻՆ ԶՈՐ ԵՎ ՂԱՎԱՍ ՔՅՈՒԹՉԵՅԱՍԵՐԻ ՀԵՏ



հոգիներում: Զեզանով և համայն աշխարհակալու մեր ժողովրդով է պայծառ մնալու Սուրբ Հջմիածինը և հզորանալու ու բարզավաճելու Տայաստանը: Զեզանով ենք Սենք քաջակեր՝ ինչպես Տայոց բողոք Տայրապեսները: Տապապուն մնացեք հաւատքի մեջ, ապրեք ու գործեք սիրով միարան, և թող ձեր հոգիները միշտ բաց մնան ասպամածային շնորհների առօն, փրկության հույսի ու Տարության հավաքի առօն, որով ապրեք է մեր ժողովուրդը, ու պիտի ապրի միշտ:

Մենք միշտ աղոթող ենք ձեր համար, ձեր երջանիկ կյանքի համար, ձեր բարի գործերի հաջողությունների համար: «Խակ բարին գործելուց չձանձրանակը, որովհետք հարմար ժամանակին պիտի հնձենք, եթե ցուլանակը» (Գաղար. Զ 9):

Թող Ասրիած խաղաղության մեջ պահպանի աշխարհը և իր հովանին դարձյալ պահի նաև հայոց ազգի վրա, պահպանելով միարան Սուրբ Հջմիածինի թնկությունը:

«Ճաշափառ»-ի արարողությունից հետո Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում Տայաստանի Տանրապետության դեսպանագործունը «Տայ Տանը» կազմակերպել էր ընդունելություն ի պարիվ Նորին Սրբության՝ Անգլիա այցելության, որին ներկա էին Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում Տայաստանի Տանրապետության արքակարգ և լիազոր դեսպան Վահե Գարիբեյանը, ԱՊԴ ներկաների դեսպանները, բարձրաստիճան ներկայացուցիչներ Անգլիան, Նապիի և Ասորի Ուղղափառ Եկեղեցիներից, հայ համայնքի ներկայացուցիչներ:

Շունչիսի 15-ին Վեհափառ Տայրապետը մնանեց Մանչեսթերի Ս. Երրորդություն Եկեղեցի, որը առաջին հայկական Եկեղեցին է, որ կառուցվել է Անգլիայում դեռևս 19-րդ դարում: Արարողությանը ներկա էին Անգլիան Եկեղեցու Մանչեսթերի թեմի Եպիսկոպոս Նիզել Սիմեոն Մաքքուլոքը և Անգլիայի Հոյս Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչը: Այսուհետո Նորին Սրբությունը ծանրացավ վետի հայ համայնքի կյանքին:

Երեկոյան Մանչեսթերի «Միջներ» հյուրանոցում ճաշկերույթ տրվեց ի պարիվ Վեհափառ Տայրապետի: Նորին Սրբությանը բարիգալստիյան խոսք ասացին Մանչեսթերի Ս. Երրորդություն Տայոց Եկեղեցու արքեմապետ պրմ Թարո Գուլիլյանը և Մանչեսթերի անգլիկան Եպիսկոպոս Սիմեոն Մաքքուլոքը: Ներկաներին այնուհետև իր օրինությունը բերեց Վեհափառ Տայրապետը, օրինության գրեթի արժանացնելով Մանչեսթերի Եկեղեցական վարչության անդամներ Դուռլա Բուրանյանին և դադիր Արա Գուլիլյանին:

Շունչիսի 16-ին Վեհափառ Տայրապետը վերադարձավ Լոնդոն, որ հերմիֆօրեին Վաչե Մանուկյանի կողմից կազմակերպվեց հյուրախրություն:

Նոյն օրը, երեկոյան ժամը 19.00-ին, Լոնդոնի Ս. Եղիշև հայոց Եկեղեցում վենի ունեցավ Ս. Պատրարքացին էր Գարեգին Բ Վեհափառ Տայրապետը՝ առընթերակայությամբ Անգլիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորի Տ. Նարան Եպս. Ռովիանիսիսյանի, Գերաշնորի Տ. Եգրաս Եպս. Ներսիսյանի: Հընթաց Ս. Պատրարքի ներկաներին հայրապետական իր պարզամքը ուղղեց Վեհափառ Տայրապետը:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱՌ-ՌԱԿՈՒՄԻ
ԽՈՍՔԸ ԼՈՆԴՈՆԻ ՍՈՒՐԲ ԵՎՀԵ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ
Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ
(16 հունիսի 2004 թ.)**

«Արդ, ո՞վ պիտի բաժանի մեզ Քրիստոսի սիրոց...»:
(Նոոմ. Լ 35)

Սիրելի հայորդիք,

Մեր առաջին խոսքը ջերմագին ողջույնն է, որը քերել ենք ձեզ ձեզ Սուրբ Էջմիածնից և մեր Մայր հողից: Քրիստոսապես մեր արքօրորակի օրինությունն ենք քերել ձեզ՝ կրկնելով Պողոս առաքյալի խոսքը. «Արդ, ո՞վ պիտի բաժանի մեզ Քրիստոսի սիրոց...»:

Ենքին մի քանի շաբաթներին Աստծով Կամքով առիթն ու հնարավորությունն ունեցանք Տայրապետական այցելություններ կատարելու, և ամեն անգամ մեր ժողովութիւն հետ հանդիպման պահերին առաքելական այս պարզանիւ էր հնչում Մեր հոգում: Այսօր էլ, երբ դոք Սրբազն Պատրիարքի եք հավաքվել ձեզ այցի եկած Տայրապետին հետ, երբ գեւանում ենք Մեզ ուղղված ձեր հայացքները, երես վատք ու գոհովթյան աղոթք բարձրացնելով երկինք, ոգում ենք կրկնել ո՞վ պիտի բաժանի մեզ Քրիստոսի սիրոց: Իր պատմությամբ, իր մշակույթով, մեր ժողովուրդը կարող է վկայել ամենահաջող զորությունը առ Քրիստոս սիրու, որը Տարության հավաքով համահամբել ու պահպանել է մեզ իրքն ազգ հայոց, իրքն Տայ Առաքելական Սուրբ Եկեղեցին:

Սիրելիներ, ինչպես բոլոր մեր գաղթօջախներում, դոք էլ Մեր անձի մեջ տևականում եք Սուրբ Էջմիածնին, որդեղից՝ Միածնի Իշման կենարար ակունքից, ասպավածային սերը, Ավելարանի լոյսով ծովացավ համայն Տայրապետին վրա և հոգեպարար քաղցրուսուց կրթությամբ պարագերեց հայոց հոգիներուն: Անցնող կիրակի տոնն էր Սուրբ Էջմիածնի: Եվ երբ խորհում ենք Սուրբ Էջմիածնի առաքելության շուրջ, նախ և առաջ գեւանում ենք Բարձրյալի շնորհը, խնամքն ու մեծ ողորմությունը մեր ժողովուրդի հանդեա: Աստված պարզեցն մեզ Սուրբ Էջմիածնի, որ լինի հայ հոգու ծննդավայրը, քրիստոնեական մեր հավատքի անշարժ վեմը և Տայոց Տայրապետության Մայր Աթոռը: Աստված պարզեցն մեզ հայոց փրկության բապան՝ բապանակիր Արարատի դիմաց: Սուրբ Էջմիածնից ճատագող լոյսով, փրկության հույսով ու հավաքով ապրեց ու սրբազնութեացներեց մեր ժողովուրդը, պաշտպանեց իր ազատությունը, մոհմիներից հարուց և աշխարհասիյուության բարածված մնաց մեկ ժողովուրդ, մեկ հոգի ու ներաշխարհ: Անզիահայ համայնքի պատմությունն է հավասարում է այս իրության, այս մեծ ու թանկ ճշմարտության: Մենք զիրենք ձեր հավատրավոր կանքի ու զործերի մասին, Սուրբ Էջմիածնի հանդեա ձեր սիրու ու նվիրումի մասին, որը փոխանցում եք նաև ձեր զավակներին:

Այսօր ազատ մեր Տայրենիքից են հնչում Սուրբ Էջմիածնի դողանչները, ազատ ու վերաշինվող Տայրենիքից է Սուրբ Էջմիածնին իր բոլոր զավակներին

բաշխում օրինություն ու շնորհ, նոր հոյս և հավատ՝ մեր ժողովրդի միացյալ ու պայծառ գալիքի հանդեպ: Մայր Տաճարի կամարների ներքո այսօր ձեր եղբայրները ու քոյրելոր փառք են մարդուն Ասպծոն, որ օրեօր բազմամարդ են դառնում մեր եկեղեցիները, որ հոյ են դառնում պարբադրվող անաստվածության ժամանակները: Չկարծենք, թե Ասպծոն մնարձելը միայն 20-րդ դարի արդյունքն է, երբ արագործներ բազմապարկվեցին զիտական մտքի հայրնազործությունները: Մարդկային պարմության մեջ շատ է եղել, երբ հավատը ընդունվել է իրք նախապաշտություն: Մարդու փորձել է երջանիկ լինել իր մտքի ձեռքբերությունը և միշտ կանգնել է փակուղու առջև, քանզի առանց հոգու կենդանության, որը խորան է Ասպծոն, չի կարող լինել ճշմարիք երջանկություն, և առանց Ասպծոն ներկայության չկա իրական առաջընթաց:

Փառք Ասպծոն, մեր ժողովուրդը, ուր էլ հաստատվել ու ասկրում է ճանաչված է իր շանսափրությամբ, իր շնորհներով: Գիտնական ու արվեստագետ շատ հայր հայր են ծանոթ աշխարհին: Բայց մանավանդ հայր ծանոթ է իրք քրիստոնյա, որ զիտի սույնութեան ու գնահատել այլոց սույնութեանը: Տոգեր բարձր աշխարհ է սա, որ բարձրանում է մեր հավատի հիմքի վրա և պահել է մեր ժողովրդին մարդկային վեհական արժեքների մեջ, միշտ աներեն, հպատիք ու լավագույն: Մենք բոլորս թե՛ Հայութեան և թե՛ Սփյուռքուն կանգնած պետք է մենակ ասպարածանաչ հոգու մեր անսասան վեհին ու երբեք չպիտի տիկարանանք, դժվարության մեջ երբեք չպիտի մնանք առանց միմիքարության և երբեք չպիտի հետանանք ճշմարտության արահելություն, այլ միշտ հայուակ պիտի պետնենք առաքելությունը մեր ժողովրդի՝ սույնութեան ու սույնութեանը գնահատել այլոց սույնութեանը: Թող Ասպծոն օրինի սույնութեանը զիտ ու շանքելը մեր ժողովրդի, 17 դարերի քրիստոնեական ժամանությունը և անշարժ պահի հավատի մեր վեհան ու խորանը՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին:

Այսօր մեր հանդիպման ուրախությունը բազմապատիկ է, քանզի վերիիշում ենք այս գոտնական ու շնորհանորոց օրը, երբ Սուրբ Եղիշեի անունով օծվեց այս եկեղեցին: Խորիդանշաբար օծվեց Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հոգակման 1700-ամյակի տարբան՝ իրք մի նոր վկայություն մեր ժողովրդի հավատի կենդանության: Վերսպին Մեր գնահատանքն ենք բերում Տիար Վաչե Մանուկյանին և Մանուկյան ընդունիքին, ուն ազնիվ ջանքով ու նախանձախընդուրությամբ նորոգվեց եկեղեցին ու բացեց իր դռները բարենպաշտ հայրույց առջև: Միշտ աղոթող ենք Մանուկյան ընդունիքի արեշաբության ու հաջողությանց համար, մեր Եկեղեցու բոլոր բարերարների համար, որոնց բարեկործությունները իրենք են հաստատում. «Արդ, ո՞վ պիտի բաժանի մեզ Քրիստոսի սիրուց...»:

Աղոթենք միասին, որ Տերը միշտ բաց պահի երկնքի խորանաշեն դռները աշխարհի վրա և հայոց կյանքի վրա: Աղոթենք, որ միշտ զորացյալ մես մեր հավատը, ու պիտի հավատանք, որ մի օր Տերը համախմբելու է մեզ Արարատի վելչիքին, Սուրբ Եղմիածնի հայցաքի ներք:

Թող Բարին Ասպծոն իր խնամքի մեջ պահպանի Անզին հայոց թեմը, պարզ սի բոլորիդ երջանկությամբ լեցուն երկար օրեւ և առաջնորդությամբ Գերա-

շնորհ Նարան Սրբազնակի ու քահանա Հայրերի՝ սպայիել-հոգևոր կյանքի շինություն ու պայծառություն:

«Ընորհը և սէր Ասպածոյ եղիցին ընդ մեզ և ընդ ամենեւսիան ամէն»:

Հավարդ Ս. Պատրարքի տեղի ունեցավ ընդունելություն Ս. Եղիշէ Եկեղեցու պահում:

Հունիսի 17-ին Վեհափառ Հայրապետը հանդիպումներ ունեցավ հայ համայնքի քարենք կազմակերպությունների և առանձին անհարմների հետ, իր մասնակցությունը թերեւ Ս. Եղիշէ Եկեղեցու սրահում Լոնդոնի հայկական դպրոցի սաների կողմից կազմակերպված հանդեսին: Հավարդ հանդեսի Նորին Սրբությունը գնահավանքի իր խոսքը, օրինությունը և պարզաբն ուղղեց լոնդոնաբնակ հայ պարանիներին և մասնուկներին:

Նոյն օրը, երեկոյան, Լոնդոնի Ռոյալ Գարդեն հյուրանոցում ի պարիվ Վեհափառ Հայրապետի քրվեց ողջերթի ճաշկերույթ, որին ներկա էին Մեծ Բրիտանիայում Հայաստանի Հանրապետության դեսպան Վահե Գարբիելյանը դիկոնց հետ, Հայաստանի Հանրապետությունում Մեծ Բրիտանիայի դեսպան Թորդա Աբրամարթը, փեր և դիկին Վաչե և Թամար Մանուկյանները, համայնքային Եկեղեցական դարբնությունների ներկայացուցիչներ:

Վեհափառ Հայրապետին ուղղված ողջերթի խոսք ասացին Ս. Սարգսի Եկեղեցու հոգաբարձության նախագահ Զոր Քյուրքյանը և բրիտանահայ համայնքային և Եկեղեցական խորհրդի ապեննապետ Արա Փալամույյանը:

Ճաշկերույթի ընթացքում ցուցադրվեց Վեհափառ Հայրապետի գահակալության հինգ դպրության նախագահ Զոր Քյուրքյանը և բրիտանահայ համայնքային և Եկեղեցական խորհրդի ապեննապետ Արա Փալամույյանը:

Այնուհետև հավաքածներին իր խոսքը ուղղեց Վեհափառ Հայրապետը: Բարձրորեն գնահավելով Անգլիայի հայության նվիրվածությունը ազգային Եկեղեցական ավանդներին, Նորին Սրբությունը Հայոց Եկեղեցու շքանշաններ և հայրապետական օրինության գրեր հանձնեց անգլիահայ համայնքի մի շարք ներկայացուցիչների, որով և ավարտվեց Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական անդամնիկ այցելությունը Մեծ Բրիտանիա և Անգլիայի հայոց թեմ:

Նորին Սրբությունը ճանապարհելու համար հաջորդ օրը Լոնդոնի Շիթրոու օդանավակայան էին Եկեղեց Անգլիայի հայոց թեմի առաջնորդ Նաթան Եպիսկոպոս Նովիաննիսյանը, Միացյալ թագավորությունում ՀՀ արքակարգ և լիազոր դեսպան Վահե Գարբիելյանը, Թենմթրերի Արքեպիսկոպոսի Էկումենիկ կապերի գծով քարտուղար Կանոնիկ Զոնաթան Գոֆը, բրիտանահայ համայնքային և Եկեղեցական խորհրդի ապեննապետ Արա Փալամույյանը, փոխադրենապետ Զորիկ Գասպարյանը, գործադիր վարչության ապեննապետ Սուրեն Սարուխանովը, խորհրդի անդամ Վիգեն Քալաշյանը:

Ն. U.O.S.S. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը այսպիսով հունիսի 18-ին ավարգելով Հայրապետական անդամնիկ այցելությունը Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն և Անգլիայի հայոց թեմ, վերադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: